«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝Դերային խաղի զարգացման առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում

Դաստիարակ՝ Լուսինե Փաշինյան

Մանկապարտեզ՝ « Սնքարի մանկապարտեզ » ՀՈԱԿ

2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ----------3

Գլուխ 1. Խաղը նախադպրոցական տարիքի երեխայի կյանքում

1.1. Խաղի մասին տեսությունների մանկավարժական վերլուծություն----------4

1.2. Խաղերի դասակարգումը----------5

1.3. Խաղային գործունեության առանձնահատկությունները----------

Գլուխ 2. Դերային խաղի զարգացման առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում

2.1. Դերախաղը երեխայի կյանքում ----------9

2.2. Դերախաղը որպես մտածողության և խոսքի զարգացման միջոց----------11

2.3. Երեխաների փոխհարաբերությունները խաղի և դերախաղի ընթացքում--------13

2.4. Խաղալիքի դերը երեխայի զարգացման գործում----------14

Գլուխ 3. Հետազոտական աշխատանքի գործնականությունը պարապմունքների ընթացքում

Եզրակացություն ----- ----------18

Օգտագործված գրականության ցանկ ----------19

Ներածություն

«Երեխան, որը չի խաղում, երեխա չէ, իսկ մեծահասակը, որը չի խաղում, կորցերել է այն երեխային, որը ապրում էր իր մեջ»

Պ. Ներուդա

Թեմայի արդիականությունը. Դերախաղը երեխայի գործունեության այն ձևն է, որը ներառում է նախադպրոցական տարիքի երեխաների գործունեության համարյա բոլոր ձևերը. խաղը համարվում է նախադպրոցականի գործունեության հիմնական տեսակը: Այդ պատճառով կարևոր է դերախաղի կազմակերպումը նախադպրոցական տարիքում: Խաղը, դերախաղը, բեմականացումը երեխայի զարգացման հրաշալի միջոց են, մասնավորապես իրավիճակային դերախաղերը, որոնք նաև հանկարծաստեղծման (իմպրովիզացիայի) մեծ հնարավորություն են տալիս երեխային՝ զարգացնելով նրա մտածողությունն ու սոցիալական հմտությունները:

Դերախաղը համադրական արվեստ է: Այն ձևավորում է երգելու, պարելու, ասմունքելու, հորինելու հմտություններ: Մշակում է խոսքի կուլտուրա: Դեռևս փոքրերի խմբում երեխային ներգրավում ենք նախաձեռնողական խաղերում: Դերախաղի ժամանակ երեխան դառնում է նախաձեռնող, ակտիվ: Թատրոն դերախաղերը երեխայի մոտ զարգացնում են գեղարվեստական մտածողությունը, ստեղծագործական երևակայությունը: Թատրոն-դերախաղը տալիս է հաղորդակցվելու, ուշադրությունը կենտրոնացնելու կարողություններ, զարգացած մտածողություն, արագ կողմնորաշվելու, ճիշտ լուծումներ գտնելու կարողություն, ուրիշներին օգնելու պարտականություն:

Մեր աշխատանքի նպատակն է ցույց տալ, թե ինչպես են դերախաղերը օգնում երեխաներին ձեռք բերելու գիտելիքներ միասնականության և ընկերասիրության մասին, զարգացնում երեխայի խոսքը, ստեղծագործական երևակայությունը, նպաստում անհատականության դրսևորմանը, զարգացնում կերպավորման, կերպարանափոխության հմտությունների, իմպրովիզ անելու կարողությունը, խմբով աշխատելու, վերլուծելու, համադրելու ունակության ձեռքբերումը, գեղարվեստական մտածողության, գեղագիտական ճաշակի, միմիկայի զարգացումը:

ԳԼՈՒԽ 1 ԽԱՂԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՅԻ ԿՅԱՆՔՈՒՄ

1.1. Խաղի մասին տեսությունների մանկավարժական վերլուծություն

Խաղի մասին առաջին տեսությունը մշակվել է19-րդ դարում հայտնի գիտնականներ՝ Ֆ. Շիլերի, Գ. Սպենսերի և Վ. Վունդտի կողմից: Նրանք խաղային գործունեությունը համարումէին արվեստի տարատեսակ և խաղի ծագումն ու էությունը պայմանավորում արվեստի ծագմամբ: Նշված հեղինակների կարծիքով՝ խաղը որպես գեղագիտական գործունեություն, արդյունք է կուտակված «կյանքի ուժերի» ավելցուկի: Նույնացնելով երեխայի և կենդանիների ձագերի խաղերը, Ֆ. Շիլերը ասում էր «կենդանին աշխատում է, երբ նրա գործունեության դրդապատժառը որևէ բանի պակասն է, խաղում է՝ երբ գործունեության դրդապատճառը ուժերի ավելցուկն է»:[1] Գ. Սպենսերը ուժերի ավելցուկը փորձում է բացատրել ավելցուկ էներգիայի ծագման աղբյուրներով, գտնելով, որ բնության էվուլյուցիոն ընթացքը բերում է ավելցուկ էներգիայի կոըտակման, որը սպառվում է «երևակայական» գործունեության ձևերի՝ խաղի արվեստի ընթացքում: Գերմանացի հոգեբան Վ. Վունդտը առաջ է գնում իր ընկերներից, փորձելով ներկայացնել խաղային գործունեության սոցիալական բնույթը, նա նշում էր, որ «խաղը աշխատանքի հետնորդն» է, ցանկացած խաղ իրենից ներկայացնում է հանրօգուտ աշխատանքի ձև:[2] Նա կարևորում էր ոչ այնքան աշխատանքի արդյունքը, ընթացքում հաճույք ստանալու, հաչույքով աշխատելու անհրաժեշտությունը: Ֆ. Շիլերի, Գ. Սպենսերի և Վ. Վունդտի «ավելցուկ էներգիայի» տեսությունը հետաքրքիր մտքեր է հայտնում խաղի ծագման և էության վերաբերյալ և նպաստում դրա ավելի խոր ուսումնասիրությանը: Հետագայում Վ. Վունդտի տեսակետը զարգացնում է Գ.Վ. Պլեխանովը:

Խաղի առաջին հոգեբանական տեսության հիմնադիրն է 19-րդ դարավերջի գերմանացի հոգեբան Կ. Գրոսը: Նա առաջարկում է խաղի ծագման կենսաբանական մոտեցում և իր տեսությունն անվանում է խաղի «վարժեցման» տեսություն: Նա խաղը համարում է գործիք, որի օգնությամբ երեխան ձեռք է բերում կյանքի համար անհրաժեշտ «հարմարանքներ», ընդ որում խաղի հիմքում ընկած է ընդօրինակման մեխանիզմը: Խաղի բիոգենետիկ ծագման կողմնակիցներ են նաև Կ. Բյուլերը, Վ. Շտեռնը և Ա. Հոլլը: Կ. Բյուլերը խաղը նմանեցնում է երազներին, ցանկություններին,

---

[1] Асмус В. Шиллер как философ и эстетик // Шиллер Ф. Собр. соч.: в 7 т. Т. 6. Статьи по эстетике, С. 696

[2] Смирнова Е. О. , Рябкова И. А. ,ПСИХОЛОГИЯ И ПЕДАГОГИКА ИГРЫ УЧЕБНОЕ ПОСОБИЕ, М.,2019, С. 68

համարելով դրանք ներքին հակումների բավարարման ձևեր: Վ. Շտեռնի կարծիքով խաղը բնազդ է, որը ստիպում է խաղալ բոլոր երկրների երեխաներին: Խաղում երեխան արտացոլում է իշխելու, պայքարի՝ իրական կյանում չբավարարված բնազդները: Ա. Հոլլը գտնում էր, որ երեխան խաղում ընդօրինակում է ոչ թե արտաքին աշխարհում գոյություն ունեցող նմուշները, այլ կրկնում է մարդկության պատմական զարգացման փուլերը, ինչպես ներարգանդային շնչանում՝ կենսաբանական էվոլյուցիայի բոլոր աստիճանները: Երեխան խաղում է, քանի որ կարիք ունի սոցիալական վերարտադրման:

Համաձայն Զ. Ֆրոյդի՝ խաղի կենսաբանական ծագման տեսության, խաղը մարդուն բնորոշ գործունեություն է՝ պայմանավորված նրա հոգեկանի զարգացմամբ: Մարդկային հոգեկանի զարգացմանը խոչընդոտում է հասարակության ճնշող ներգործությունը: Արդյունքում, երեխայի ցանկությունների և պահանջմունքների ու հասարակության միջև առաջանում է հակասություն, կոնֆլիկտ, որի հաղթահարմանն է ուղղված երեխայի խաղային գործունեությունը: Ըստ Զ. Ֆրոյդի, հասարակությունն արգելք է հանդիսանում երեխայի սեռական էներգիայի ազատ դրսևորման, և միայն խաղի օգնությամբ է նրան հաջողվում հասնել ներքին հավասարակշռության: Երեխան խաղի միջոցով սիմվոլիկ ձևով վերապրում է իրեն ցավ պատճառող իրավիճակները, լիցքաթափվում է և այպիսով հաղթահարում կոնֆլիկտը:[3] Զ. Ֆրոյդի ժամանակակից հետևորդները գտնում են, որ երեխան խաղի միջոցով կարծես բնազդաբար, նախագծում է իրական կյանքի դժվարությունները և սովորում հաղթահարել դրանք: Այսպիսով՝ խաղը հասարակական կյանքին հարմարվելու միջոց է, իսկ մանկությունը՝ չափազանց բարդ, վտանգներով լի ժամանակահատված:

1.2. Խաղերի դասակարգումը

Երեխաների խաղերը բազմազան են իրենց բովանդակությամբ, ինքնուրույնության աստճանով, իրականության արտացոլման եղանակներով, կազմակերպման ձևերով, մանկավարժական արժեքներով և այլ գործոններով: Գիտամանկավարժական գրականության հայտնի են խաղերի դասակարգման տարբեր եղանակներ և մոտեցումներ: Օրինակ, Ֆ. Ֆրյոբելը կարևորում է խաղի մանկավարժական նշանակությունը, և խաղերը տարբերակում է իրենց մանկավարժական ուղղվածությամբ: Նա առանձնացնում է մտավոր խաղեր, սենսոր խաղեր, շարժախաղեր և այլն:

[3] Фрейд З. , Психоанализ, теория и метод. Концепция защитных механизмов

Վերջին տարիներին խաղերի դասակարգման հետաքրքիր տարբերակ է առաջարկել ռուս մանկավարժ Ս. Լ. Նովոսյոլովան, որի հիմքում ընկած է խաղային գործունեության նախաձեռնությունը: Հեղինակն առանձնացնում է խաղերի 3 խումբ.

1. Խաղեր, որոնց նախաձեռնողը երեխաներն են, դրանք ինքնուրույն և ստեղծագործական բնույթի խաղեր են: Օրինակ՝ սյուժետադերային խաղերը, խաղ-թատերացումները, խաղ-փորձարկումները:
2. Խաղեր, որոնց նախաձեռնողը մեծահասակներն են, դրանք ունեն ընդգծված մանկավարժական ուղղվածություն: Օրինակ՝ ուսուցանող և ինտելեկտուալ խաղերը, շարժախաղերը:
3. Ժողովրդական խաղեր, որոնք ավանդաբար ձոխանցվում են սերնդեսերունդ:

Ժամանակակից նախադպրոցական մանկավարժությունն ընդունելի է համարում Ս. Ա. Կոզլովայի և Տ. Ա. Կուլիկովայի կողմից առաջարկված խաղերի դասկարգման եղանակը, որի հիմքում ընկած է խարհրդային մանկավարժության մոտեցումը: Խաղային գործունեությունն իր բնույթով լինում է ստեղծագործական և նպատակաուղղված, զարգացնող կամ կանոններով: Առաջին խմբին դասվում են.

- Սյուժետադերային խաղերը,
- Խաղ-թատերացումները,
- Կառուցաղական խաղերը,
- Ռեժիսորական խաղերը և խաղ-երևակայությունները:[4]

Ստեղծագործական խաղերի բովանդակությունը կառուցվում է խաղացող երեխաների կողմից, այն ստեղծագործական բնույթի է: Ստեղծագործական խաղերում արտացոլվում են երեխաների տպավորություններն ու պատկերացումները արտաքին աշխարհի հանդեպ, ինքնուրույնության և ակտիվության մղումները, դրսևորվում են «ազատության աստիճանները», ցանկությունները, նախասիրություններն ու հետաքրքրությունները: Խաղի սյուժեն ընտրվում է խաղացող երեխաների կողմից և դրա հիման վրա կառուցվում է խաղի բովանդակությունը: Երեխաների խաղային մտահղացումն իրականացվում է դերային փոխակերպման եղանակով: Ստեղծագործական խաղերը նպաստում են սոցիալական դերերի յուրացմանը, սոցիալական փորձի ձեռքբերմանը և սոցիալական հարաբրությունների հաստատմանը:

[4] Մարության Ս. Ա., Դալլաքյան Ա. Մ., Նախադպրոցական մանկավարժություն, էջ 101

Խաղերի երկրորդ խումբն են կազմում կանոնով խաղերը, որոնք հատուկ կազմակերպվում են մեծահասակների կողմից երեխաներին ուսուցանելու, դաստիարակելու և զարգացնելու նպատակով: Այս խմբին են պատկանում դիդակտիկ խաղերը և տարբեր բնույթի զարգացնող խաղերը: Կանոնով խաղերը մշակվել են ժողովրդական խաղերի հիման վրա, դրանք ունեն հստակ մանկավարժական ուղղվածություն: Կանոնով խաղերի բովանդակությունը նախապես մշակվում և պատրաստի ձևով ներկայացվում է երեխաներին: Կանոնով խաղերի բացառիկ նշանակությունը նախադպրոցականի ներդաշնակ զարգացման զարգացման գործում առանձնահատուկ կարևորվել է Դ. Բ. Էլկոնինի կողմից, ով նշում է դրանց կրկնակի մանկավարժական ներգործությունը՝ մի կողմից մանկավարժի նպատակաուղղված ներգործությունը, մյուս կողմից՝ երեխաների փոխներգործությունը, այսինքն՝ ինքնուսուցումը: Այսպիսով՝ խաղերը ուսուցանում են և դաստիարակում, կրթում են և զարգացնում, նպաստում են երեխայի ինքնագանահատմանը և փոխնահատմանը:

1.3. Խաղային գործունեության առանձնահատկությունները

Նախադպրոցական տարիքի երեխաների խաղային գործունեության առանձնահատկությունները լավագույնս ներկայացված են Ա.Բ. Ռեսովայի, Ռ.Ի. Ժուկովսկայի և Դ.Վ. Մենջերիցկակայի աշխատութուններում, ովքեր բնությագրելով նախադպրոցականի խաղային գործունեության էությունը, նշում են դրա ստեղծագործական բնույթը: Նախադպրոցականի խաղային գործունեությունը զարգանում է հոտևյալ առանձնահատկություններով.

1. Խաղային գործունեության ընթացքին բնորոշ է սյուժե, որն ի հայտ է գալիս երկու տարեկան հասակում և աստիճանաբար բարդանում ու հարստանում է: Եթե կրտսեր նախադպրոցականի խաղի սյուժեները անկայուն են, փոփոխական, հաճախ, նույնիսկ, անտրամաբանական, ապա ավագ նախադպրոցականների սյուժեն իրենից ներկայացնում էթեմատիկ բովանդակության տրամաբանական զարգացում և վերլուծություն՝ խաղային կերպարների, գործողությունների և հարաբերությունների միջով: Սյուժեի զարգացումը պայմանավորված է մի շարք գործոններով՝ խաղացող երեխաների սոցիալական փորձով, խաղային գործունեության դրդապատճառներով, կազմակերպման և ղեկավարման եղանակներով:

2. Խաղային գործունեության նպատակը սոցիալական դերերի յուրացումն է, որն ուղղված է նաև մարդկության հավաքական փորձի յուրացմանը՝ խաղային փոխհարաբերությունների սոցիալական նմուշների յուրացման եղնակով: Նախադպրոցականի խաղային գործունեության հիմնական միավորը դերն է, որի յուրացմանն են ուղղված խաղային գործողություններն ու հարաբերությունները: Խաղի դերերով է պայմանավորված խաղի զարգացման ընթացքը:

Դերային խաղի զարգացումն ընթանում է նախադպրոցականի մտածողության զարգացման հետ համահունչ, փոխպայմանավորված: Նախադպրոցական տարիքում, ըստ այդմ, տարբերում ենք՝ խաղ-գործողություններ, խաղ-պատկերումներ, խաղ-հարաբերությունները: Միջին նախադպրոցական տարիքում երեխան պատկերացնում է և պատկերավոր կերպարները փորձում է արտացոլել խաղային գործողությունների միջոցով:

3. Ստեղծագործական բնույթի խաղային գործունեությունը նախադպրոցական տարիքի երեխայի համակողմանի զարգացման և դաստիարակության արդյունավետ միջոց է՝ մանկավարժից պահանջող կամակերպման վարպետություն և ղեկավարման նրբանկատ հմտություններ: Խաղային գործունեության գրագետ ղեկավարումը ենթադրում է խաղի ընկալում և դիտարկում երեխայի կողմից: Նախադպրոցականին խաղը հրապուրում է երկակի բնույթով, և որպես հաճույք, և որպես աշխատանք: Ստեղծագործական խաղային գործունեության ղեկավարումը պահանջում է անուղղակի միջամտություն՝ ուղղված խաղի ինքնակառավարմանը և երեխաների ներքին կազմակերպվածության բարձրացմանը:

ԳԼՈՒԽ 2 ԴԵՐԱՅԻՆ ԽԱՂԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Դերախաղը երեխայի կյանքում

Նախադպրոցական տարիքը երեխայի զարգացման եզակի և որոշիչ շրջան է, երբ առաջանում են անհատականության հիմքերը, զարգանում է կամքն ու կամավոր վարքագիծը, ակտիվորեն զարգանում է երևակայությունը, ստեղծագործական միտքը և ընդհանուր նախաձեռնությունը: Այնուամենայնիվ, այս բոլոր կարևոր հատկությունները ձևավորվում են ոչ թե մարզումների ժամանակ, այլ նախադպրոցական երեխայի առաջատար և հիմնական գործունեության մեջ՝ խաղի մեջ: Երեխայի վարքի հմտությունների ձևավորման հզոր միջոցներից մեկն է համարվում դերային խաղը: Երեխաների անհատական առանձնահատկությունները և բնավորության գծերը վառ արտահայտվում են խաղի բնույթի և այն դերի միջոցով, որը իր վրա վերցնում է երեխան ընդհանուր խաղերում: Ընդհանուր խաղերը մեծ նշանակություն ունեն բնավորության դաստիարակման գործում: Իր կյանքի ոչ մի փուլում երեխան չի սովորի այդքան շատ և արդյունավետ, քան իր մանկական խաղերի ընթացքում: Խաղը երեխայի համակողմանի զարգացման, ինքնահաստատման, ինքնակատարելագործման կարևոր միջոց է, որը բացահայտում է երեխայի բնավորության բոլոր կողմերը»: Խաղի առավելությունը ցանկացած այլ մանկական գործունեության նկատմամբ այն է, որ դրանում երեխան ինքն է կամովին ենթարկվում որոշակի կանոնների, իսկ կանոնների կատարումն է, որ տալիս է առավելագույն հաճույք: Սա երեխայի վարքագիծը դարձնում է բովանդակալից ու գիտակցված, դաշտից վերածում կամայինի: Հետևաբար, խաղը գործնականում միակ ոլորտն է, որտեղ նախադպրոցական երեխան կարող է ցույց տալ իր նախաձեռնողականությունն ու ստեղծագործական գործունեությունը:

Երեխայի վարքի հմտությունների ձևավորման հզոր միջոցներից մեկն է համարվում դերային խաղը: Երեխաների անհատական առանձնահատկությունները և բնավորության գծերը վառ արտահայտվում են խաղի բնույթի և այն դերի միջոցով, որը իր վրա վերցնում է երեխան ընդհանուր խաղերում: Ընդհանուր խաղերը մեծ նշանակություն ունեն բնավորության դաստիարակման գործում: Դիմացկունություն ցավի նկատմամբ, արժանապատվության, պատասխանատվության, վստահության և արդարության զգացում: Իր կյանքի ոչ մի փուլում երեխան չի սովորի այդքան շատ և արդյունավետ, քան իր մանկական խաղերի ընթացքում: Այդ իսկ պատճառով խաղային գործունեությունը հարկավոր է տեղափոխել դպրոցական ուսուցման շրջան, այդ դեպքում երեխայի ներքին հնարավորությունները ավելի ազատ են զարգանում:

Գալիս է մի պահ, երբ փոքրիկը սկսում է պրոեկտել շրջակա միջավայրն ու իր կյանքը: 1,5 տարեկանից փոքրիկը ընդօրինակում է այն, թե ինչպես է մայրը լվանում ափսեները, ինչպես է պապիկը կարդում: Իհարկե ոչ բոլոր երեխաները կարող են կռահել ու խաղալ դերային խաղ: Անհրաժեշտ է հուշել և ցույց տալ, որ տիկնիկներին ու արջուկներին կարելի է կերակրել գդալից, պատառաքաղից: Ընդ որում պետք է մեկնաբանել գործողությունները և արտաբերել ձայները՝ նյամ–նյամ և այլն: Եթե երեխան 1,5 տարեկանում կարող է փոխարինել իրական առարկան (օրինակ գնացքը մի շարք խորանարդիկներով) հորինված առարկայով, ապա դա շատ լավ ցուցիչ է նրա զարգացման համար: Չի կարելի ընդհատել և ուղղել նրան, թող երևակայի:

Երեխային շատ են անհրաժեշտ դերային խաղերը, դրանք նրան օգնում են նախապատրաստվել կյանքին ու հասարակությանը: Գործողությունների կրկնումը մեծերի ետևից և սյուժետների խաղարկումը կարող են թվալ չհղկված: Երեխան կարող է պահել իրեն գոռոզ, միամիտ, ակտիվ կամ պասիվ: Տղաները իրենց վրա վերցնում են պաշտպանի, ռազմիկի դերը: Աղջիկները՝ ապագա մոր , տնային տնտեսուհու դերը: Մինչև 6 տարեկան դերերը կարող են փոփոխվել և լինել տարատեսակ: Հետագայում երեխան կհասկանա, որ մոր դերը խաղալ և օրորել տիկնիկին պետք է կատարեն աղջիկները: Երբ երեխան գիտակցում է, որ գործում է ինքնուրույն, սկսվում է նրա կյանքի առաջին դերային խաղը: Այս իրադարձությունը սկսվում է 2-ից 4 մինչև 5-7 տարեկան սահմաններում: Երեխան փորձում է կրկնել մեծի գործողությունները, բոլոր առարկաները և իրադարձությունները , որոնք վառ էմոցիոնալ արձագանք և տեղ են գտել երեխայի հոգում՝ վերածվելով նրա նոր կերպարներին:Երեխան կարող է խաղարկել տարատեսակ <<առարկայական>> դերեր: Նա կարող է լինել մեծ բեռնատար մեքենա, կամ փոքրիկ կատու: Մանկական երևակայությունը չունի սահմաններ: Կերպարադերային խաղը դա առանձին աստիճան է դեպի երեխայի երևակայական ու կախարդական աշխարհ: Երեխային շրջապատող յուրաքանչյուր առարկա ձեռք է բերում նոր նշանակություն: Թավայի կափարիչը վերածվում է ղեկի, սանրը, գդալը՝ բարձրախոսի: Աստիճանաբար կերպարային խաղերը ձեռք են բերում սյուժե: Երեխաները սյուժետած դերային խաղերը խաղում են սկսած 3,5-ից 4 տարեկանից: Բոլոր երեխաներն էլ հայրիկի ու մայրիկի կոշիկները հագնել սիրում են՝ որ նրանց պես լինեն, որ ավելի բարձրահասակ լինեն, որ պարզապես ուրիշ լինեն: Վերազգեստավորման խաղը, բացի իր խորհրդանշանակությունից, դրանից բխող գրոտեսկային էֆեկտի շնորհիվ միշտ զվարճալի է: Սա թատրոն է, միշտ հետաքրքիր է ուրիշի զգեստներ հագնելը , ինչ-որ դեր խաղալը, ոչ քո կյանքով ապրելը, օտար շարժուձևեր կրկնելը:

Այսպիսով՝ ապրելով խաղային իրավիճակներում, կարծես «անցնելով» դրանք իր միջով, երեխան սովորում է շփվել, իր համար սահմանում է վարքի նորմեր և կանոններ որոշակի իրավիճակներում, սովորում է փոխազդել արտաքին աշխարհի հետ և սովորում է նրա օրենքները՝ նույնիսկ չհասկանալով, որ ապագան այս ամենը կդառնա նրա ապագա կյանքը կառուցելու հիմքը: Խաղի միջոցով երեխան ծանոթանում է իրեն շրջապատող աշխարհին, մարդկանց փոխհարաբերություններին: Նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման մեջ դերախաղն ունի առաջատար դերերից մեկը, քանի որ դրանում է, որ մենք տեսնում ենք երեխայի մտածողության, երևակայության, նրա հակումների և հետաքրքրությունների պրոյեկցիան:

2.2. Դերախաղը որպես մտածողության և խոսքի զարգացման միջոց

Խաղը մեծ տեղ է գրավում նախադպրոցական տարիքի երեխաների կյանքում: Դա բացարձակապես անհրաժեշտ է ինչպես երեխայի ընդհանուր մտավոր զարգացման, այնպես էլ հատկապես նրա ինքնագիտակցության ձևավորման համար:[5] Նախադպրոցական մանկավարժության մեջ խաղը վաղուց օգտագործվել է երեխաներին սովորեցնելու և կրթելու համար: Դա ժողովրդական մանկավարժության անփոխարինելի հատկանիշն էր: Դրա նմուշները սերնդեսերունդ փոխանցվել են ամենափոքր երեխաներին մեծահասակների և մեծ երեխաների միջոցով:[6]
«Նախադպրոցական տարիքի երեխաների համար խաղերը բացառիկ նշանակություն ունեն. նրանց համար խաղը ուսումն է, խաղը նրանց համար աշխատանք է, խաղը նրանց համար կրթության լուրջ ձև է», - այս խոսքերը պատկանում են ռուս ուսուցչուհի Ն.Կ. Կրուպսկայային:[7] Նախադպրոցական տարիքի երեխաների կապակցված խոսքի մշակումը հիմնականում տեղի է ունենում երկխոսության և մենախոսության ուսուցման շնորհիվ: Երկխոսության մեջ մտնելը պահանջում է այնպիսի բարդ կարողություններ ինչպիսիք են՝ լսել և ճիշտ հասկանալ զրուցակցի արտահայտած մտքերը, սեփական դատողություններն արտահայտել հստակ և շարահյուսորեն ճիշտ, պահպանել որոշակի հուզական տոն, լսել սեփական խոսքը: Երեխայի խոսքը զարգացնելու համար հարկավոր է շատ խոսել նրա հետ՝ զրուցել նրան հետաքրքրող, հուզող թեմաներով, տարիքին մատչելի, հասանելի ամեն ինչի մասին, պատասխանել նրա հարցերին, անգամ դրդել երեխային հարցեր առաջադրել: Իրենց նախաձեռնությամբ երեխաները կարող են ունկնդրել երաժշտական ձայնագրություններ, նվագել նվագարաններով,

[5]Доронова Т.Н. 3-4 տարեկան երեխաների դաստիարակություն, կրթություն և զարգացում մանկապարտեզում. մեթոդ. ուղեցույց - Մ .: Կրթություն, 2006 թ. – էջ 208

[6] Доронова Т.Н., Галигузова Л.Н.,Մանկությունից մինչև պատանեկություն» հաղորդումը - Մ.,2007 թ.,էջ 303

[7] Крупская Н.К., Խաղի դերը մանկապարտեզում, - М. , 1980. – էջ 263

կազմակերպել համերգներ, պարել, հորինել, հեքիաթներ պատմել, կազմակերպել թատերականացված ներկայացումներ և այլն, այսինքն՝ ակտիվորեն օգտագործել զարգացնող միջավայրի հնարավորությունները: Այս դեպքում դաստիարակի խնդիրը զարգացնող, բազմաբնույթ առարկայական միջավայր ստեղծելն է: Երեխաները հանպատրաստից պիեսներ են հորինում, անհրաժեշտ բեմական միջոցներն իրենց ձեռքով պատրաստում, որպես դերասաններ հանդես գալիս՝ տրված թեմայով իմպրովիզացիա են անում, հանդիսատեսներին ներկայացման մեջ ներքաշում, և այստեղ թատրոնը կյանքի պահ է, ոչ թե ապրածի վերարտադրություն: Խաղում երեխայի կողմից զգալի փորձ է կուտակվում: Իր խաղային փորձից երեխան նկարում է գաղափարներ, որոնք նա կապում է բառի հետ: Դերախաղում ներկայացված առարկաների հետ երեխան հաճախակի կրկնվող շփման մեջ է մտնում, ինչի արդյունքում դրանք հեշտությամբ ընկալվում են, տպվում հիշողության մեջ: Յուրաքանչյուր առարկա ունի իր անունը, յուրաքանչյուր գործողություն ունի իր բայը: [8] Խոսքը երեխայի համար իրականության մի մասն է: Այստեղից հետևում է, թե որքան կարևոր է երեխաների գործունեությունը խթանելու և նրանց լեզվի զարգացման շահերից ելնելով, նրանց խաղային միջավայրը մանրակրկիտ կազմակերպել, ապահովել նրանց համապատասխան ընտրանի առարկաների, խաղալիքների, գործիքների, որոնք կսնուցեն այդ գործունեությունը, և զարգացնել իրենց լեզուն կոնկրետ գաղափարների հարստացված պաշարի հիման վրա: Լեզվական խաղերի շնորհիվ է, որ երեխաների մոտ ձևավորվում է հաղորդակցության և խոսքի մշակույթ՝ արտասանության հստակություն, նախադասություններ և ընդհանրապես իրենց մտքերը ճիշտ ձևակերպելու կարողություն: Ուստի դերախաղերի դերը խոսքի զարգացման գործում մնում է արդիական: Լոգոպեդների (Յու. Ֆ. Գարկուշա, Վ. Ի. Սելիվերստով, Լ. Ն. Ուսաչևա, Տ. Բ. Ֆիլիչևա և այլն) փորձը ցույց է տալիս, որ գիտելիքների, խոսքի հմտությունների և կարողությունների յուրացումը տեղի է ունենում ավելի հեշտ և ամուր, երբ լոգոպեդը ներառում է տարբեր տեսակի խաղեր և. խաղային իրավիճակներ ուսումնական գործընթացում :[9] Այսպիսով՝ ուսումնասիրելով վերոնշյալը, կարող ենք ասել, որ խաղային գործունեությունը պահպանում է իր նշանակությունն ու դերը որպես խոսքի զարգացման և նրանց անհատականության ու ինտելեկտի համակողմանի զարգացման համար անհրաժեշտ պայման: Երեխաներն իրենց հիմնական գիտելիքներն ու տպավորությունները ստանում են միայն նպատակային խաղային գործունեության ընթացքում:

---

[8] Тихеева Е.И., Երեխաների խոսքի զարգացում. 1981 - Մ .: Կրթություն, էջ 52

[9] Усачева Л.Н. Խոսքի ընդհանուր թերզարգացած նախադպրոցական տարիքի երեխաների խաղային գործունեության ուղղիչ կողմնորոշում (սյուժե-դերային խաղ) , 1983. - С. 24

2.3. Երեխաների փոխհարաբերությունները դերախաղի ընթացքում

Դերախաղի ժամանակ երեխան դառնում է նախաձեռնող, ակտիվ: Դերախաղերը երեխայի մոտ զարգացնում են գեղարվեստական մտածողությունը, ստեղծագործական երևակայությունը: Դերախաղը տալիս է հաղորդակցվելու, ուշադրությունը կենտրոնացնելու կարողություններ, զարգացած մտածողություն, արագ կողմնորաշվելու, ճիշտ լուծումներ գտնելու կարողություն, ուրիշներին օգնելու պատրաստակամություն: Երեխային պարտադրաբար ընդգրկել դերախաղի մեջ անիմաստ է: Նա պետք է կամովին ընդգրկվի բեմականացման մեջ: Դերախաղի գործունեության հիմքը ազատ ընտրության զգացումն է: Այսպիսով՝ դերախաղն ինտեգրված գործունեության լուրջ տեսակ է: Օգտագործելով խոսքը՝ երեխան շփման մեջ է մտնում, համագործակցում է մյուսների հետ: Այսօր ծնողների աշխատանքային ծանրաբեռնվածությունը բացասաբար է ազդում երեխայի զարգացման, նրա բանավոր խոսքի ձևավորման վրա: Պարբերաբար երեխայի նկատմամբ անտարբերությունը վատ է ազդում երեխայի հոգեկան վիճակի վրա, երեխան դառնում է ագրեսիվ, նյարդային ամաչկոտ, տրամադրության անկումներով: Սա արդեն ազդում է երեխաների միջանձնային հարաբերությունների վրա: Միջանձնային հարաբերությունները ստեղծվում են իրավիճակների դեպքում, խաղի ժամանակ: Երբ երեխան խաղալիք է ուզում ընկերոջից, պետք է խոսի նրա հետ, հարցնի, մտերմանա և առաջարկի խաղալ միասին: Դերային խաղի միջոցով ստեղծվում է կապ, միջանձնային հարաբերություն երեխաների հետ: Այս կապը դրական է ազդում երեխայի զարգացման գործում, երեխան ազատվում է բարդույթներից, մեկուսանալու ցանկությունից, ձեռք է բերում ինքնավստահություն: Երեխաներն արդեն նախադպրոցական տարիքից հաղթահարում են իրենց վախերը, ավելի հեշտ և բնականոն է ստացվում շփումները մեծահասակների հետ: Յուրաքանչյուր ներկայացում խաղալիս երեխան սիրում է իր շուրջն ունենալ դեկորացիաներ, տիկնիկներ: Տվեք երեխաներին ինքնուրույն գործելու հնարավորություն, և նա իր հավաքածուից կգտնի այն, ինչն իրեն կօգնի մտնել դերի մեջ: Թատերական խաղեր խաղալիս երեխաներն իրենք են ստեղծում դեկորատիվ պայմաններ: Դեկորացիաներ պատրաստելու համար կարող են ծառայել հին անկողնու պարագաներ, հեռուստացույց, կեղծամներ, գլխարկներ: Այսպիսով, երեխան իր համար ստեղծում է ներկայացման, դերախաղի պայմաններ, սկսում շփվել երևակայական կերպարների հետ: Նման խաղից հետո շփումը այլ երեխաների հետ շատ անմիջական է լինում: Բոլոր երեխաները սիրում են իրենց ձեռքով պատրաստել դեկորացիաները, տիկնիկների հագուստները: Անհրաժեշտ է հուշել և ցույց տալ, որ տիկնիկներին ու արջուկներին կարելի է կերակրել գդալից, պատառաքաղից: Ընդ որում, պետք է մեկնաբանել գործողությունները և արտասանել ձայները: Երեխաների անհատական

առանձնահատկությունները և բնավորության գծերը վառ արտահայտվում են խաղի բնույթի և այն դերի միջոցով, որը իր վրա վերցնում է երեխան ընդհանուր խաղերում: Ընդհանուր խաղերը մեծ նշանակություն ունեն բնավորության դաստիարակման գործում՝ դիմակայություն ցավի նկատմամաբ, արժանապատվության զգացում: Երեխային շատ են անհրաժեշտ դերային խաղերը, դրանք օգնում են նրան նախապատրաստվել կյանքին ու հասարակությանը:

2.4. Խաղալիքի դերը երեխայի զարգացման գործում

Խաղալիքն ունի հուզական և հոգեբանականկան մեծ ազդեցություն երեխայի զարգացման գործընթացում: Մասնավորապես դաստիարակության մեջ կարևոր դեր են խաղում տիկնիկները: Տիկնիկով ճիշտ ընտրված խաղը հնարավորություն է տալիս ձեռք բերել մի շարք հմտություններ կապված ամենօրյա կենցաղային կյանքի հետ: Տիկնիկի միջոցով մեծերը կարող են երեխային սովորեցնել քնել, ուտել, ենթարկվել: Երեխան օգտագործում է իր անսպառ երևակայությունը և ստեղծագործելու կարողությունը խաղալով: Եթե ծնողները չեն խաղում երեխայի հետ, ապա արդեն 2,5 տարեկանից սկսած երեխան փորձում է խաղալ՝ ներգրավելով “հերոս” խաղալիքներ: Հետևաբար խաղալիքի անհրաժեշտությունն ունեն և՛ տղաները, և՛ աղջիկները: Խաղալիքը դառնում երեխայի ամենամտերիմ ընկերը, խաղալիքի միջոցով երեխան իրականացնում է իր բոլոր երազանքները և ցանկությունները, մտահաղացումները: Խաղալիքով խաղալիս՝երեխան արտացոլում է իր պատկերացումները կյանքի, իրականության վերաբերյալ: Մեծ հրաշք է, երբ երեխան խաղում կամ շփվում է տիկնիկի հետ: Երեխան հարցեր է առաջադրում, տալիս է տիկնիկին իբրև թե այդ հարցերը տիկնիկից է լսում ու ինքն էլ սկսում է պատասխանել իր տված հարցին: Այսպիսով, տիկնիկի միջոցով շատ բարդ ու համակողմանի վերլուծություններ են տեղի ունենում երեխայի գիտակցության ու հոգեբանության մեջ: Տիկնիկը երեխայի համար դառնում է կյանքի հետ շփվելու, շատ հարցերի պատասխանները այդ շփման միջոցով գտնելու միջոց: Այնպես որ, այն ծնողները, որոնք իրենց երեխաներին հաճախ են տանում տիկնիկային թատրոն, նախ ազատվում են երեխաների բարձրացրած շատ հարցերի պատասխանները տալուց, միաժամանակ օգնելով հետագա կյանքում ինքնուրույն հաղթահարել շատ խոչընդոտներ: Տիկնիկները հայելի են, նրանց միջոցով երեխան ցուցադրում է իրեն շրջապատող մարդկանց վարքը: Դերախաղի արդյունքը ավելի ակնհայտ կլինի, եթե դերախաղը լինի կենդանի երեխայի խաղալիքը (օրինակ շունը, ձին, արջուկը…) նրա համար կենդանի են, շնչավոր, երեխան խոսում է, հարցեր տալիս, պատասխանում, ապրում նրանց հետ:

ԳԼՈՒԽ 3. Հետազոտական աշխատանքի գործնականությունը պարապմունքների ընթացքում

Պարապմունքը իրականացվել է Սևքարի մանկապարտեզի կրտսեր 2-րդ խմբում: Պարապմունքի թեման՝ «Խոհարար» դերային խաղը ընտրվել է հետազոտական աշխատանքի թեմային համապատասխան: Պարապմունքին սաների մասնակցությունը եղել է ամբողջական: Պարապմունքի իրականացման ընթացքում որպես դիտորդ ներկա է եղել մանկապարտեզի տնօրենը: Պարապմունքից հետո կատարվել է պարապմունքի իրականացման վերաբերյալ վերլուծություն, դիտորդները արտահայտել են պարապմունքի վերաբերյալ իրենց կարծիքը՝ մատնանշելով պարապմունքի ուժեղ և թույլ կողմերը:

Անհրաժեշտ պարագաներ՝ սպասք, բանջարեղեն, մրգեր, խոհարարի համապատասխան հագուստ, ուսումնական ձեռնարկ

Պարապմունքի անցկացման տեսակը՝ ԽԻԿ համակարգով

Պարապմունքի նպատակը՝ Ծանոթանալ խոհանոցին, խոհանոցում օգտագործվող պարագաներին, իմանալ պարագաների կիրառման ոլորտները (յուրաքանչյուր պարագա ինչի համար է օգտագործվում), ծանոթանալ խոհարարի մասնագիտությանը և դրա առանձնահատկություններին, ձևավորել հետաքրքրություն, դրական վերաբերմունք խոհարարի աշխատանքի նկատմամբ, զարգացնել տեսական գիտելիքը գործնականում կիրառելու հմտություն, դերային խաղ կազմակերպելու, տարբեր դերեր կատարելու կարողություն:

Վերջնարդյունքները

Գիտելիք՝նկարագրել խոհանոցային պարագաները՝ ըստ նշանակության, մեկնաբանել խոհարարի աշխատանքը և դրա առանձնահատկությունները

Կարողություն՝կարողանալ խաղալ դերային խաղեր՝ ըստ համապատասխան թեմայի, կարողանալ դերը ներկայացնել ամբողջական

Հմտություն՝ տիրապետել իրավիճակային փոփխություններով պայմանավորված դերային խաղ խաղալու, տարբեր դերեր ստանձնելու կարողությանը:

Պարապմունքի ընթացքը (իմ փորձով)

Խթանման փուլ

Պարապմունքը սկսեցի նոր նյութի ընկալմանը երեխաների նախապատրաստմամբ: Դա իրականացրի զրույցի միջոցով՝ բացահայտելու համար նոր նյութի վերաբերյալ երեխաների գիտելիքները: Ակտիվացրի երեխաներին՝ ներգրավելով նրանց քննարկվելիք նյութի մեջ. այն է՝ զրույց խոհանոցի, խոհարարի մասին:

Երեխաների մոտ զրույցի միջոցով առաջացրի գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու ձգտում: Նկարագրեցինք, թե ինչպիսին է լինում խոհանոցը, ինչպիսի պարագաներ կան, քննարկեցինք, թե ինչ բանջարեղեններով կարելի է ուտեստ պատրաստել: Երեխաներից յուրաքանչյուրը խոհանոցը պատկերացնում էր այնպիսին, ինչպիսին որ իրենց տան խոհանոցն է, նրանք թվեցին իրենց սիրելի ուտեսնտերը:

Իմաստի ընկալման փուլ

Նախքան երեխաներին խոհանոց տանելը, ես նրանց համար կարդացի «Խոհարար եմ ես փոքրիկ» բանաստեղծությունը: Այսպիսով, այցելեցիք խոհանոց, երեխաները զրուցեցին խոհարարի հետ, ծանոթացան նրա աշխատանքին, ուտեստներին, խոհարարի մասնագիտությանը: Ես երեխաներին հղեցի հարցեր և կայցավ քննարկում: Հարցերն ունեին այսպիսի բնույթ.

- Ձեր կարծիքով ո՞վ կարող է խոհարար լինել: Ի՞նչ եք կարծում, հե՞շտ է եփելը: Ի՞նչ եք կարծում, որտեղ կարող է աշխատել խոհարարը:

Երեխաները պատասխեցին, որ ճաշը պատրաստում են իրենց մայրիկներն ու տատիկները և իրենք էլ մեծ սիրով օգնում են նրանց:

Խոհանոցում երեխաներին բացատրեցինք, որ առավոտյան խոհարարը արթնանում է: Բոլորից առաջ նա գալիս է աշխատանքի, քանի որ պետք է ժամանակ ունենա նախաճաշ պատրաստելու համար: Խոհանոցում խոհարարն ունի իրեր, որոնք օգնում են նրան ճաշ պատրաստելիս: Տարբեր մթերքներով խոհարարը պատրաստում է համեղ ուտեստներ և հյուրասիրում երեխաներին: Կերակուրը պատրաստելուց հետո խոհարարը և օգնականը պատրաստում են սեղանը, շարում ափսեները և բարի ախորժակ մաղթում բոլորին: Նախաճաշը ավարտելուց հետո խոհարարը և խոհարարի օգնականը հավաքում են ափսեները և լվանում սպասքը: Այս ամենը վերջացնելուց հետո խոհարարը ափսեները դնում է իրենց տեղերում: Երեխաները տեսան, թե ինչպես է կաթսայի մեջ եփվում ճաշը: Այսպիսով՝ ավարտվեց մեր այցը խոհանոց, և ես խոհանոցում սովորածը ամբողջացրի երեխաներին հարցնելով, թե իրենց դուր եկա՞վ, թե ինչպես է պատրաստվում կերակուրը: Ո՞վ էր խոհանոցում կերակուր պատրաստում: Ինչ էր հագել խոհարարը, ինչպիսին պիտի լինի նրա հագուստը: Երեխաները պատաս-խանեցին, որ խոհարարը պետք է հագած լինի ձյունաճերմակ խալաթ ու գլխարկ: Խոհարարի խալաթը միշտ պետք է լինի մաքուր: Սնունդ պատրաստելուց առաջ խոհարարը պետք է ձեռքերը լվանա օճառով և ջրով, չորացնի սրբիչով:

Եվ որ մեր սննդակարգը պետք է լինի բազմազան և պարունակի տարբեր վիտամիններ:

Կշռադատման փուլ

Երբ վերադարձանք խոհանոցից, երեխաներին հրավիրեցի խաղալու «Խոհարար» դերային խաղը՝ հասկանալու արդյո՞ք նրանք ինչ-որ բան սովորեցին: Երեխաներին ասացի, որ պատկերացնենք,թե մենք դարձել ենք խոհարար և այն, ինչը տեսանք և սովորեցինք այսօր, պետք է ցույց տանք խաղի միջոցով: Երեխաները ընտրեցին դերեր. 2-ը խոհարար, ոմանք ընտրեցին խոհարարի օգնականի դերը, ոմանք ասացին, որ կօգնեն սեղանը պատրաստելու հարցում, ոմանք էլ ասացին, որ կլվանան ափսեները և կտեղավորեն: Որոշեցինք, որ երեխաները կբաժանվեն 2 խմբի, մի խումբը կպատրաստի կարտոֆիլով ապուր, մյուսը՝ աղցան: Այսպիսով՝ դերերը բաշխված էին և ես տվեցի խաղի մեկնարկը: Դերային խաղը ուղեկցվեց իմ խորհուրդներով, յուրաքանչյուր սան մեծ ոգևորությամբ ստանձնեց իրեն տրված պարտականությունները: Եվ ահա խումբը ավարտեց խաղը, մենք ունեինք կարտոֆիլով ապուր և աղցան՝ պատրաստված երեխաների կողմից: Խաղը ուսուցանող էր և շատ հաճելի: Խաղից հետո ամփոփեցինք օրվա թեման: Ես գովաբանեցի երեխաներին, քանի որ նրանք հրաշալի խաղացին և քանի որ յուրաքանչյուրը իր դերն ուներ խաղի կայացման համար: Օգտագործելով, կիրառելով նմանատիպ դերային խաղեր սննդի ոլորտում (սրճարան, ռեստորան, ճաշարան)՝ նպաստում ենք երեխաների ճանաչողական կարողությունների զարգացմանը, ստեղծագործական մտածողության ձևավորմանը, կապակցված խոսք կառուցելու կարողության զարգացմանը, ինքնուրույն և խմբով աշխատելու կարողությունների զարգացմանը, փոխօգնությանը, փոխաջակցությանը, ընկերական դրական մթնոլորտի ստեղծմանը:

Ամփոփում

Կիրառելով դերային խաղեր սննդի ոլորտում, նպաստում ենք երեխաների ճանաչողական կարողությունների զարգացմանը, համակողմանի և ներդաշնակ զարգացած երեխայի ձևավորմանը: Նման ստեղծագործական խաղերի միջոցով երեխայի մոտ զարգանում են ստեղծագործական երևակայությունը, կազմակերպչական հմտությունները, բանակցելու, պլանավորելու, ախատանքի քայլերը խմբակիցների հետ քննարկելու կարողությունները: Ամփոփելով շարադրանքը, կարող եմ ասել, որ պարապմունքը ստացված էր և ես հասա այն վերջնարդյունքներին, որոնք նպատակադրել էի:

Երեխաների նկարները՝ ստրոև.

Դիտորդի՝ տնօրենի դիտարկումը.

1. Դաստիարակի պատակն էր՝ դերային խաղի միջոցով արտացոլել խոհարարի աշխատանքը: Երեխաներին միավորել ընդհանուր խաղային մտահղացման շուրջ և կառուցել համատեղ խաղի սյուժե: Երեխաներին մղել դրական արարքների՝ փոխզիջման, փոխօգնության, համագործակցության: Դաստիարակը հասավ պարապմունքի նպատակին:
2. Խաղի ընթացքում երեխաները դրսևորեցին մեծ պատասխանատվություն՝ հետևելով դաստիարակի հրահանգներին: Յուրաքանչյուրը հաճույք էր ստանում իր կատարած աշխատանքից: Վերջում համտեսեցին իրենց պատրաստած աղցանը:
3. Երեխաները հասկացան, թե որքան կարևոր է խոհարարի աշխատանքը: Նրաք դա ամենօրյա տեսնում են իրենց տանը՝ տատիկների և մայրիկների կողմից:

Եզրակացություն

Յուրաքանչյուր հետազոտություն անցկացնելու համար պետք է առաջադրվեն հստակ նպատակներ, ապա դրանց իրագործման համար՝ խնդիրներ, այդ խնդիրների լուծման համար էլ պետք փնտրել հնարավոր տարբերակներ և հասնել ակնկալվող վերջնարդյունքներին, պարապմունքը դարձնել և՛ հետաքրքիր, և՛ արդյունավետ: Մեր գործնական հետազոտության արդյունքը պարզորոշ ցույց տվեց, որ նախ՝ բոլոր սաները յուրացրել են դասի թեման, ապա՝ ստեղծագործության ուսուցումը ենթադրում է սանի մտահորիզոնի զարգացում, երևույթները բազմակողմանի ուսումնասիրելու, սեփական դիրքորոշումները ձևակերպելու, արտահայտելու և պաշտպանելու, արագ կողմնորոշվելու, հետազոտություն կատարելու, թիմում աշխատելու, նոր գիտելիքներ ձեռք բերելու հմտություններ և կարողություններ: Այս ամենում կարևորվում է պարապմունքի անցկացման մեթոդաբանությունը: Ավարտելով աշխատանքը՝ եկա այն եզրակացության, որ ցանկացած աշխատանքում պետք է որդեգրել վերլուծական մտածողությունը, հայտորոշել խնդիրները, դժվարությունները և բարելավման ուղիները, հետո քննարկել յուրաքանչյուր բարելավում: Փորձս ցույց տվեց, որ սաները այսպիսի դասերին ավելի ակտիվ են, անկաշկանդ, դրսևորում են վերլուծական մտածողություն, մոտիվացիան ուղղված է գիտելիքի ձեռքբերմանը, արժեքային համակարգի, համամարդկային արժեքների ձևավորմանը, բավականին անաչառ են ինքնագնահատման և փոխադարձ գնահատման ժամանակ: Դերախաղի ընթացքում աշակերտները ցուցաբերում են կամքի ուժ, համարձակություն, իրավիճակին ստեղծագործաբար մոտենալու կարողություն:

Այսպիսով՝ դերային խաղն իր տեսակներով արդյունավետ մեթոդ է ուսումնառության արդյունավետության բարձրացման գործում,օգնում է ուսուցման գործընթացում բազմաթիվ նպատակների իրականացմանը: Լուծվում են ինչպես կրթական, այնպես էլ դաստիարակչական բնույթի, կարգապահության, հաղորդակցման, միմյանց լսելու կարողության և համագործակցության զարգացման հետ կապված բազմաթիվ խնդիրներ: Կարելի է ասել, որ ուսուցչի վարպետության մակարդակով, մասնագիտական և մեթոդական պատրաստվածությամբ է պայմանավորված սովորողների արդյունավետ ուսուցումը, ինչն էլ իր հերթին ապահովում է մեր երկրի ապագա քաղաքացիների մտավոր և հոգևոր կարողությունների զարգացումը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ծննդից մինչև վեց տարեկան երեխաների զարգացման և կրթական չափորոշիչներ, ՅՈՒՆԻՍԵՖ – Վերանայված հրատարակություն.- Եր.: Աստղիկ, 2019. – 196 էջ:
2. Մարության Ս. Ա., Դալլաքյան Ա. Մ., Նախադպրոցական մանկավարժություն, 126 էջ
3. Վարդումյան Ս. Հրաշք մատիկները, ուսումնամեթոդական ձեռնարկ մանկավարժների և մանկապարտեզի դաստիարակների համար, 2007թ.
4. Доронова Т.Н. 3-4 տարեկան երեխաների դաստիարակություն, կրթություն և զարգացում մանկապարտեզում. Կրթություն, 2006 թ. - 208 էջ
5. Доронова Т.Н., Галигузова Л.Н., Մանկությունից մինչև պատանեկություն» Մ., 2007 թ., էջ 303
6. Крупская Н.К., Խաղի դերը մանկապարտեզում, - М. , 1980. -263 р.
7. Смирнова Е. О. , Рябкова И. А. ,ПСИХОЛОГИЯ И ПЕДАГОГИКА ИГРЫ УЧЕБНОЕ ПОСОБИЕ, М., 2019,
8. Тихеева Е.И., Երեխաների խոսքի զարգացում. 1981 - Մ .: Կրթություն
9. Усачева Л.Н. Խոսքի ընդհանուր թերզարգացած նախադպրոցական տարիքի երեխաների խաղային գործունեության ուղղիչ կողմնորոշում (սյուժե-դերային խաղ), 1983 թ.
10. Фрейд З. , Психоанализ, теория и метод. Концепция защитных механизмов
11. Шиллер В. как философ и эстетик // Шиллер Ф. Собр. соч.: в 7 т. Т. 6. Статьи по эстетике. С. 696